

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄԱՐՏԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. ճառարների խանութում

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի

Тифлис. Редакция „Маска“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԱՌՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիայի քաղաքականութիւնը. — Ներքին տեսչութիւնը: Կամակ վ. Ագրիֆից: Ներքին լուրերը: Արտաքին տեսչութիւնը: Աւստրիա: Արտաքին լուրերը: «Մշակի»: հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: — Բանասիրական: Երկու ուսանող:

ԱՆԳԼԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Օարմանայի երևոյթ էր ներկայացնում Անգլիայի քաղաքականութիւնը արեւելեան պատերազմի յայտնվելու օրից մինչև այժմ:

Անգլիան անդադար սպառնում է և մի և նոյն ժամանակ ոչինչ չէ անում, իր սպառնալիքը իրագործելու համար:

Պատերազմի յայտնվելու օրից Անգլիան միշտ ցոյց էր տալիս որ պէտք է խառնվի պատերազմի մէջ, պէտք է Թիւրքիայի կողմը բռնի, որպէս զի չը թոյլ տայ Ռուսաստանին իր կամքը կատարելու:

Պատերազմը վերջանում է, Ռուսաստանը յաղթող է հանդիսանում Թիւրքիայից, — և Անգլիան դարձեալ տեղից չէ շարժվում, այսպիսով զայրացնում է իր դէմ Թիւրքերին, որոնք նրանից պատերազմի ամբողջ տևողութեան ժա-

մանակ օգնութիւն էին սպասում:

Եւ երբ ամեն բան վերջացած է, ուսանողը արդէն կ. Պոլսի առջև են կանգնած, — Անգլիայից գալիս է հեռագիր հեռագրի վրա՝ թէ այսբան հազար զոյգ կոշիկներ պատուիրած են անգլիական զօրքի համար, թէ աւաղի համար պարկեր են գնվում, թէ այս կամ այն զրահաւոր նաւը զենաւորվում է, թէ Անգլիայի զինուորական զործարաններում այսբան մշակներ են բանում, թէ բանուորների թիւը կրկնապատկւել է, վերջապէս թէ Մալտա կղզու վրա զօրքեր են ուղարկված և այլն, և այլն....

Եւ ահա այդ սպառնող, վախեցնող քաղաքականութիւնը Անգլիան շարունակում էր ուսանողի քաղաքականութիւնը Անգլիայից պատերազմի առաջին րօպէից մինչև այժմ: Մեր այսօրվայ համարում տպված Լոնդոնի հեռագիրը ցոյց է տալիս որ Անգլիան հետեւելու է նոյն քաղաքականութեանը մինչև կոնգրեսի կայանալը:

Ինչ նպատակին է ուղղում հասնել Անգլիան այդ տեսակ զարմանալի քաղաքականութեամբ: Նա կամենում է վախեցնել, ստրսափեցնել իր հակառակորդին, Ռու-

սաստանը, հաւատացնել ամբողջ աշխարհին որ նա ամեն պատրաստութիւնները տեսել է հարկաւոր ժամանակ Ռուսաստանին պատերազմ յայտնելու, իր սեփական շահերը արեւելքում պաշտպանելու համար:

Բայց արդեօք կը կատարի նա իր սպառնալիքները, թէ կը բաւականանայ միմիայն սպառնալիքներով, որպէս զի իր մտքում պարտաւորեցնի Ռուսաստանը զինուորներ անել իր պահանջների մէջ, իր առաջարկված պայմանների շատերի վերաբերութեամբ:

Մենք հակվում ենք աւելի զէպի այն համոզմունքը, որ Անգլիայի սպառնալիքները կը մնան լոկ սպառնալիքներ և նա այդ տեսակ հնացած քաղաքականութեամբ ոչինչ գործնական հետեւանքի չի հասնի, ինչպէս և մինչև այժմ ոչինչ հետեւանքի չէ հասել:

Մենք կարծում ենք որ Անգլիան մէնակ բոլորովին անզօր է Ռուսաստանի պէս մի երկրի դէմ պատերազմել, որ այս րօպէիս այդ երկիրը եւրօպական միացած երկրների թւում բոլորովին առանձնացած դիրք է ընդունած Ռուսաստանի դէմ բռնած իր այդ քաղաքականութեան մէջ:

Եւ, Անգլիան վերջին ժամանակները իր վարմունքով ապացուցել է որ նրա թէ խոստումներին և թէ սպառնալիքներին մեծ արժէք և նշանակութիւն տալը չէ կարելի:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ Վ. ԱՅՈՒԼԻՍԻՑ

Եթէ «Մշակը» ասում է, որ բոլոր հայերը ազուկեցի լինին, ինքը շատ բաժանորդներ կունենար, իսկ ևս ընդհակառակն ասում եմ՝ եթէ ամեն մի հայ այնպէս շուտ կատարէր «Մշակը» յայտնած մտքերը, որպէս ազուկեցի է կատարում, այն ժամանակ մեր ազգը շատ բաղաւոր կը լինէր:

«Մշակը» № 15 և 21 տպված էին երկու նամակներ, որոնցից մէկը նկարագրում էր «Հաղաւորակից» այցելութիւնը և խորհուրդ էր տալիս ազուկեցիներին սեփական բժշկ ունենալու համար հոգ տանել, — իսկ միւսը նկարագրում էր մի գիծ քահանայի վարմունքը և հոգեւոր իշխանութեան ուշադրութիւն էր հրաւիրում անարժանին հեռացնել իր պաշտօնից: — Նամակագրի երկու առաջարկութիւններն ևս հասան իրանց նպատակին:

Բժիշկ հրաւիրելու մասին քանի օր առաջ այստեղ ժողով կազմվեցաւ, որքան ինձ յայտնի է, ժողովի կարգադրութիւն այս է եղել. — Ժողովրդի ունեւոր դասը, ամեն մարդ իր կարողութեանը համեմատ, երեք տարի շարունակ վճարելու պարտաւորութեամբ, ստորագրել է հատուցանել մի որոշ գումար, 20 ռուբլուց սկսած մինչև 30 ռուբլի, որոնց ամբողջութիւնը լրացնում է 1200 ռուբլի, որպէս տարեկան ուժիկ բժշկին: Բացի այս գումարից բժիշկը կը ստանայ նոյն պարունակից առանձին վճար իր այցելութիւններին համար, ի հարկէ, փոքր չափով: Մի և նոյն ժամանակ նա պէտք է պարտաւորված լինի նայել աղքատներին

ԲԱՆՍՈՒՐԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂ

I

Արամը հարուստ ծնողաց որդի չէր. Նա հեռացած հայրենիքից, Բ. քաղաքի գիմնադիտում մտադիր էր հաղթանակութիւն բռնել 7-րդ դաստան մանկու համար: Հենց այդ նպատակով նա այդ իրան անծանօթ քաղաքում վարձել է մի սենեակ ինչը բուրդով և պարսպում էր գիմնադիտում աւանդով առարկաներով: Թէև նա լաւ գիտէր որ այն 10 ռուբլը, որ ամսական ստանալու էր իր ծնողներից, ծառայելու էին նրա ամեն պիտոյքների համար, ուրեմն նրան անկարելի էր մի այդպիսի գնանոց սենեակ պարագեցնելը, այնու ամենայնիւ նա լաւ համարեց զօրի մնալ մի քանի ամիսանախարհաւոր պիտոյքներից, քան թէ մնալ մի խոնաւ, ակոտոտ ու մութ, բանտի նման սենեակում, որ կարող էր մնալ իր առողջութեանը: Արամը ջանք արեւաւոր աչքերին հրաժարական տալիս ասում էր նրան մայրը. — ուր գնում ես, գնա, համաքեզ լաւ պահպանի, քու ջանիդ զաղրն արա. ես միշտ քեզ մօտ չեմ ըլիլ, որ աղունկի նման չորս կողմը պիտի դամ ու քեզ պահեմ: Քու սաղութիւնը իմ սաղութիւնն ա, քու ուրախութիւնը իմ ուրախութիւնն: Եթէ սիրում ես ինձ, էս խրատը անկաշունդ պիտի պահի, որդի:

Եւ ծնարարի որ սենեակը, ուր մնում էր Արամը, քաղաքի յարմարաւոր էր մի ուսանողի համար. նրա պատերը կայքած էին ծաղիկեկար թղթերով, մի գրասեղան, ուր դարձած էին նրա դասարան, գրեւորք, երկու աթոռ, մի մանձակալ, ուր փռած էր նրա չոր անկողինը, կազմում էին սենեակի կահ-կարասիքը: Երկու պատուհանը, որոնց մէկի մօտ դրված էր գրասեղանը, նայում էին ուղիղ մի կանաչագետ, սիրուն պարտէզին, քրտեղ տարվալ ամեն եղանակում ծառերը ծանրաբեռված էին լինում իր ժամանակի պտուղներով: Պարտէզից ցած հոսում էր բարձր ձայներ արձակելով քաղաքի գետը, որի քաղցր ու անխորտակ խնկոյնը հասնում էր Արամի ականջին, նրա պարագելու ժամանակ: Այդ տուր նա շատ անգամ ամառ ժամանակ, առաւօտները, գիւտ պրնը չը ծագած, լողանում էր և կազդուրում էր իր ոյժերը: Բայց պէտք է ասել, որ բայց այս յարմարաւոր անկողնից, ուր չը կար սչ մի շարժողութիւն ու չիտթ, որ խանգարէր ուսանողի պարագելութիւնը, Արամը ուրիշ ոչինչ չուներ: Մի երկու տասնական րօպէիները, որ բերել էր նա իր հետ, վաղուց սպառվել էին: Ամսական տաս ռուբլը, որ խոստացածի համաձայն ուղարկելու էին ծնողքը, ուշանում էր: Պատաւ կիներ, որի տանը մնում էր Արամը, ծանօթ սորա գրութեան հետ թէ ևս բարեազգաբար իր բարութեամբ ներողամիտ էր դէպի նա սենեակի վարձի վերաբերութեամբ, բայց զրանով, ամիսս, որ թիւթանում էր նրա գտուր վիճակը: Ամսական իրաւ աղքատ ձայն ծաղիկ համար մեծ ծնողութիւն էր քաջում: Ստիպված այս հանդամանքից, նա մի երկու անգամ

պարտք առաւ ծանօթներից, որոնց գտել էր այդ հեռու երկրում:

— «Ս», ինչ դժուար բան է կեանքը. մէկը վախկոտութեան, չապլոթեան մէջ լողում է, միւսը սև, չոր հաց չունի ուտելու ապրելու համար: Բնչ ծանր բան է ապրել պարտքի մէջ. անհամարձակ ձեռք մեկնել մի ծանօթի, որ գոցէ անգլիաբար մերժի քո չնչին խնդիրը, ծայրիկ իրաւունքը... այսպէս էր մտածում Արամը և առաւօտները ժամը 7-ին տեղից բարձրացած սկսում էր պարագել, նստած իր գրասեղանի մօտ, բայց գալիս, մօտենում էր ձայնի ժամանակը, ժամի մէկը, երկուսը, երեքը և նրա դատարկ փորը լիչեցնում էր նրան բնականապէս ինքնակալ կեանքների, հացի անհրաժեշտութեանը, նա ոյժից ընկած, մոռանում էր ամեն բան. յետ գցելով իր պարագումները նա վեր էր կենում և յուսաւ հատված ման էր գալի սենեակում: Մի օր, այդ նեղ րօպէին, նա թուլացած քաղցածութիւնից անց ու դարձ էր անուր սենեակում. հազար ու մի մտածումներն փոխարինում էին մէկը միւսին. յուսահատութիւնը արտայայտվում էր նրա ամեն մի շարժվածքում: Քափ ու քրտիկը վերջապէս երեւցան նրա ճակատին: Նա միջոց չուներ. չէ կարողանում բաւականութիւն տալ իր անհամբեր պարտատիրօջը: Փորը հաց, հաց էր պահանջում: Յանկարծ նրա գլխում մի միտք ծագեց. նայեց իր չորս կողմը, առաջը գրված էին մի գրասեղան, երկու աթոռ և մի մանձակալ, ուրիշ ոչինչ: Նա վեր առաւ իր գրեթէ երկու թանկագինը և սենեակի դուռը փակելով, գոլոր գնաց տանից: Նա ասում էր գրաւ գնելու այդ գրեթէ հացարարի մօտ: — Երեք ֆունտ

հաց տուր ինձ, ասաց Արամը, մօտենալով մի հացարարի խանութի, Հացարարը կռեց հացը և տուեց նրան ասելով՝ «փողը» — Նայեց իր չորս կողմը Արամը, բարեազգաբար ոչ ոք չը կար:

— Չը կայ այժմ ձեռքիս, բայց անպատճառ կը բերեմ քեզ անհոգ կաց, Նրա աղքատիկ հագուստը կասկածանքի պատճառ եղաւ հացարարին:

— Չէ կարելի, ասաց նա սառնութեամբ, ես քեզ չեմ ճանաչում: Արամը հանեց գրաւակալը փեշի տակից՝ «Ու», ասաց նա, էս քեզ գրաւական, եթէ չես հաւատում ինձ, Հացթուրի համար, մի ֆունտ հացը աւելի գին ունի, քան թէ մի քանի տասուր գիրքը: Գիտարութեամբ վերջապէս համաձայնեց նա գրեթէ առանկ և հացը տալ Արամին: Հաղի կարողացաւ սա ծածկել իր ուրախութիւնը հացարարի մօտ. նա թուաւ և մի ակնթարթում հեռացաւ այնտեղից:

Այսպիսի դառն օրերը Արամի համար կրկնվում էին շատ անգամ, որովհետև վաղուց սպասելի տաս ռուբլիները, որ հաղի կարողանում էր ուղարկել նրա բազմամարդ ընտանիքի տէր հայրը, բաժանում էր իր պարտատէրերին և ինքը մնում էր մի և նոյն քաղցած ու ծարաւը: Դասեր, որոնցով յոյս ուներ, մաւաւոր թիւթանցնել իր նիւթական վիճակը, ամենէին չէին գտնվում: Կեսիցի այս գտնաւ պայմանների հետ կրոււնելով, Արամը պարագում էր ամենայն եռանդով ու սիրով միակ իր նպատակին հասնելու համար: Այդ նպատակը կրթութիւն, ստանալն էր համալսարանում, որի տուած դարձացումը միակ միջոց պէտք է լինէր նրա համար գործելու հասարակութեան մէջ: Այս բարձր գաղափարը նրա

ճրիագներ և իսպառ չքաղարկելից զեղի փող չընդունել։ Իսկ Ազգութիւնի գործը, միւս գիւղը-րայքում, բոլորէ ազատ է իր գործունէութեան մէջ։

Բոլորովին համակրելով ազգութիւնների մարդա-սիրական զգացմունքներն ազգայնական վերաբերու-թեամբ, հարկաւոր եմ համարում նկատել, որ պէտք է աշխատել, հրաւիրված բոլորէ ազգով հայ լինի, որովհետեւ մի ուրիշ, կամ օտարազգի հազիւ կարող էր օգուտ բերել, երբ որ տեղային լեզու չէ խմանում, մին էլ հայը հայի ցաւը աւելի լաւ է հասկանում, քան թէ օտարը...

Եւ իմ կողմից խորհուրդ կը տայի հրաւիրել պ. Գ. Գովանդիսեանցին, այդ մարդը ընդունակ է ծնունդով մեր հասարակութեանը, ոչ միայն որպէս խղճատանջով բժիշկ, այլ նա կարող էր օգուտ բերել և տեղային դպրոցներին, իբրեւ բնագիտութեան վարժապետ և այլն։ Կարծեմ, պ. Գովանդիսեանցը կը ցանկանայ վերջացնել իր հայելը Շարուրի մօտակներին հետ, և ընտրել Ազգութիւն նման մի խուլ անկիւն, ուր ոչինչ պա-կաս չէ մի մարդու համար, որ անխոտով կեանք է սիրում։

Գուցէ պարոնին արգելք կը լինի մի բան, այն է չը թողնել տէրութեան ծառայութիւնը։ Բայց որքան ինձ յայտնի է, Ազգութիւն հասարակու-թիւնը միտք ունի միջնորդել կառավարութեան, որ իր հրաւիրած բժիշկի ծառայութիւնը պայտօ-նական համարվի։

Գարով տէրութիւն, պէտք է ասել, որ «Աշակի» յօդուածը կարգաւորց յետոյ՝ մեր հասարակու-թիւնը իր մէջ ինչի նախագահութեամբ՝ մի ընդ-հանուր ժողով կազմեց, ուր շինական դատա-րանը վճռեց հեռացնել զգինս իր պաշտօնից։ Եւ դատարանի վճիռը երկու օրինակ, մէկը պէտք է ուղարկվի մարմնաւոր իշխանութեան, իսկ միւսը հազար իշխանութեանը քանի որ գործը մի հոգեւորա-կանի է վերաբերում։ Եւ վերջինին դիմելու նոյն-պէս հարկ չը կար, քանի որ տէրութիւն մի պաշ-տօնաւոր մարդ է այստեղ, իրանք ազգութիւնը վար-ձել են նրան, և իրանք էլ կարող են, նրա եկած հանապազօր ցոյց տալով, ասել. «ոչէ, դոն քո բանին, դոն Ղարաբաղու անտառներում դար-ձնալ մօշ և զկերել կեր, դու քահանայացու մարդ չես»։

Բայց որպէս լսեցի, տէրութիւն ինքն է առիթ տվել շինական դատարանին ծայրայեղ միջոցնե-րի դիմել, որ նրան կազակներով հեռացնեն այստեղից։ Նա իր երեսը մէջտի պէս պնդաց-րել է, և գնալ չէ ուղում, անդադար սպառ-նալով, թէ իրան ոչինչ անել չեն կարող, որով-հետեւ էլ միաձայն «սրբազաններից» մէկը իր պաշտպանն է... Է՛դ էր պակաս, «սրբազան-ները» սրիկաներին են պաշտպանում անմեղ հայ —բրիտանական արեւն թափելու համար...։

Տեսնե՛ք, ի՞նչ է այդ «սրբազանը» և նրա հետ մեր հայելը կսկսենք...

Մէջ առաջացել էր զանազան գրգռելից հանած մտքերից և ժամանակակից լրագիրներից, որ նա շատ սիրով կարդում էր։ Նրա 21 տարին այդ ժամանակ լրացել էր։ Արշլին օրերը նա շատ էր խնդում հօրը, չը նայելով սրա անկարող-ութեանը, ուղարկել համալսարան շարունակելու իր կրթութիւնը։

—Ինչ շատ բանի ետեկց ես ընկնում, Արամ, ասում էր նրան մի օր ծերունի հայրը, շատ կար-դալն ինչ ես անում, այժմ որդի, ինչ որ գիտես, էն էլ ա հերիք։ Գու տեսնում ես, որ ես էս ա հա-լիւորելիմ։ Մի կողմից էլ դու քօմակ արւմ. հա-ր ըստ Աստուած մի կտոր հաց կը տայ կուտե՛նք։ —Էդ հօ Աստուած ամեն ստեղծած էլ էդպէս ա անում, հայրիկ ջան։ Ինքը դադում, ինքը ու-տում։ Չէ որ մարդ մարդի համար ա ստեղծ-ված, Դատ մարդ, որ իրա աշխատանքը ուտի, շատ մարդ էլ չոր քար կուտի։ Էս դու շատ ան-դամ ես ինձ ասել։ Մարդիկ իրար պըտի օգ-նեն. ընկերը ընկօր պակասութիւնը պըտի ասի, եթէ խմանում ա, որ էդ պակասութիւնը վնաս կը բերի նրան. էսպէս մտքեր ես շատ անգամ եմ կարդում գրքերում։ Ամա ես անց աւելի լաւ կօգնեմ իմ ընկօրս. խելքը ըլնմ, թէ տգէտ։ Հայ-րը հասկացաւ, թէ որդին ինչ է կամենում ասել և պատասխանեց՝ ի հարկէ խելքը, որդի։

—Ամա խելքը ըլնելու համար մարդ պըտի կըր-թութիւն ստանայ, և բարձր կրթութիւնը մեզ համալսարանն ա տալիս. համալսարան գնա-լուց առաջ էլ, պըտի գիմնադիէն վերջացնել։ Հայրը թէն հին մարդ էր, բայց լաւ հասկա-նում էր Արամի խելքը խօսքերը։ Նա համոզ-ված ասաց՝ գնա, որդի, Աստուած քեզ հետ. գնա

Ես բոլորովին դարմացած եմ, մտածելով, թէ ինչու մեր Ազգութիւնը քահանաների կողմից բաղդ չունի։ Ամեն բան մեղանում լաւ է, վատը միայն քահանան է։ Ոչ մի տեղում չես տեսնի համե-մատաբար մեր եկեղեցիներին պայծառութիւնը. ազգութեցին ահաղին ծախսեր է արել իր եկեղե-ցիները դարդարելու համար. և ոչ մի տեղում քահանայի դրութիւնը այնպէս ապահովված չէ, որպէս այստեղ. —այսուամենայնիւ ազգութեցին իր հասարակութեանը արժանաւոր քահանաներ չունի։

Պատճառը ես այդպէս եմ մեկնում. ազգութեցին շատ գործնական մի ժողովուրդ է, նրա մէջ հա-ղիւ կը գտնվի մի մարդ, որ անգործ լինէր և աշխատելու անհրաժեշտ էր. ի հարկէ, այս տեսակ մարդիկ չէին ցանկանայ քահանայ դառնալ, որով-հետեւ քահանայ դառնում են մեղանում նրանք միայն, որ կեանքի ուրիշ ասպարէզներում ապ-րուստ ճարելու ընդունակութիւն չունին։ Եւ այս է պատճառը, որ բնիկներից ոչ ոք քահանայ չէ ձեռնադրվում. եղածները՝ բոլոր օտար երկրներե-րից են գալիս, և եկողները շատ անգամ այն-պիսի «թուկից փախածներ» են լինում, որպէս մեր «գիւրդը»...

Ես յոյս ունեմ, որ ազգութեցիք այսուհետեւ կը մտածեն իրանց միջից քահանաներ պատ-րաստելու համար. և եթէ ստիպված կը լինեն օտար տեղերից հրաւիրել, դոնեա թող նախ ճա-նաչեն, թէ ինչ մարդիկ են բերել տալիս։ Ազգու-թեցին իր փողերը չէ խնայում լաւ վարժապետ-ների և բժշկի համար, բայց միևնոյն ժամանակ պէտք է մտածել, որ քահանան, —հոգևոր բժիշկը, աւելի հարկաւոր է։ Եւ քանի որ լաւ վարժապ-տութիւններ է լինում մեր քահանաներին, ինչու խիստ ընտրողութիւն չանել։ Ի՞նչ նշանակու-թիւն ունի դարգարել եկեղեցիները Արշակունիի դահլիճի ամենաթանկագին ջահերով, երբ ամ-բողջ տարի է անցկենում, մեր եկեղեցիների բե-մից մի օրինաւոր քարոզի ձայն չենք լսում. երբ մեր ժամերգութիւնները միայն զգուանք են յա-րուցանում, երբ մեր քահանաները փոխանակ իրանց հօտի բարոյական և հոգեւոր ուղղութեան վրա հօդ տանելու, աւելի դալթակողութեան և խոսովութեան պատճառներ են դառնում։

Ի՞նչու է ժողովուրդը իրար անդը իր փողերը կորցնում, երբ որ նոյն փողերով կարելի էր հրա-ւիրել ամենալաւ եկեղեցականներ. Ազգութեցիք նման մի օրինաւոր հասարակութեան պատիւ չէ բերում այսպիսի քահանաներ ունենալ. քանի որ իրանց միւս հասարակական պէտքերի մէջ ոչինչ պակասութիւն պատճառներ են դառնում։

Վերջացնում եմ նամակս, աւելացնելով, որ փետրվարի 23-ին այստեղ թօմայ առաքելոյ վան-քում, առաջին անգամ հանդիսաւոր կերպով կատարվեցաւ սուրբ Վարդանանց նահատակ-ների տօնախմբութիւնը։ Պատարագիչ էր Գեոր-գիւմրեան հայր սուրբը. վանքի տաճարի կենտ-րոնում փառաւոր կերպով դրած էր Ս. Վար-դանի շիրմը. երկսեռ դպրոցների աշակերտները

ըստ արեւի ձէնն ածա։ Ինչքան ջանումս ջան կայ, կանուսն դիմաթ ու բերնումս չունէ, ըստ ու-սումին ես ոչինչ չեմ խնայելի։ Թող լուսնը, ծա-րաւ մնամ. չորեքս, զգալս կը ծախեմ ու լեզ կօգնեմ, ինչքան կարամ... Արտասուք խեղ-դեցին խեղճ աղւորին և նա չը կարողացաւ իր սիրոյ զգացմունքը արտայայտող խօսքերը չա-րունակել։ Արամը փաթաթվեց հօրը և իր ար-տասուքը խառնեց նրա արտասուքին։ Սա շատ սիրում էր ծերունուն։ Այս վերջի օրերն էր, երբ Արամը Գ. քաղաքը պէտք է գար։

II

Չորս ամիս անցել էր այն օրից, երբ նա, եկած Գ. քաղաքը, պարսպում էր իր դասերով Սեպտեմբեր ամիսը մօտեցաւ և բերեց իր հետ հարցաքննութեան օրերը։ Նրա անընդհատ աշ-խատասիրութիւնն ու եռանդը պսակվեցին կա-տարելապէս։ Նա ամենայն աջողութեամբ տուեց իր հարցաքննութիւնը և ընդունվեց 7-դ դա-սառան, Ապրիլից նրա արած առաջադիւնու-թեան և ընդունակութեան այն շնորհակալու-թիւնն էր, որ ուրախ դէմքով, ժպիտը երեսին արեց նրան գիմնադիւնի գերեկտորը և յայտնեց, թէ յոյս ունի թէ նա լինելու է առաջին աշա-կերտների թիւում։ Արամը մտած գիմնադիւնում ուսնում էին գլխաւորապէս վրացիներ, մասամբ ուսանեւ, հրէաներ, լեհացիներ և հայեր։ Հայերի թիւը շատ քիչ էր այդ տեղ։ Արամը շուտ միջո-ցում գրաւեց դէպի ինքը աշակերտների շատերի սիրտը։ Նա բնականապէս ուղեց այդ հայրենի-քից հեռու երկրում ծանօթանալ և մինչև անգամ մտերմանալ հայերից մի քանիսի հետ, որոնք

և աշակերտուհիները չընկալաւ էին նրան, իւրաքանչիւրը մի-մի վառած մօմ ձեռքում ու-նեւով։ Պատարագից և սովորական խորհուրդ-ները կատարելուց յետոյ դպրոցի բարձր գա-սառան աշակերտներից մէկը կարգաց պ. Մէ-լլը—Յակոբեանի հեղինակած ճառը, որ պատ-մական հետազոտութեամբ նկարագրում էր մեր հին դեռ որդի դարը։ — Հայերի քաղաքական և հոգեւոր իշխանութեան անկումը նոյն դարում, նրանց կործանման պատճառները, պարսիկների խորամանկութիւնները մեր աղքը կու տարու համար, և աղքի ընդհանուր օղբերգութիւնը բռնա-կալի կամքին ընդդիմանալով, —այս բոլորը խիստ ազգու կերպով պատկերացած էր պարոնի ճառի մէջ. և յետոյ աղքի ողբին հանդիսանում է Վար-դանի անձնաւորութեան մէջ, որպէս կրօնական հերոսի և հայրենեաց պաշտպանի, որը Ղևոնդ-ների և Գովսէփների աշակցութեամբ, կատարում է Աւարայրի դաշտում իր փառաւոր գործը։ Պ. Մէլլը—Յակոբեանի գրվածքի մէջ կրթողական միտքը այնպէս գեղեցիկ ճարտարութեամբ ար-տայայտված էր ստեղծական գոյների տակ, որին հեղինակի վրձինը այնքան ընդունակ է։

Յանկալի կը լինէր, որ պարոնը հրատարակէր իր ճառը, մանաւանդ այն պատճառով որ նա բոլորովին համապատասխանում է մեր այժմեան դրութեանը, բացի դրանից, հեղինակը մի օրինակ տուած կը լինէր, թէ ճառերը չեն գրվում միայն փքված խօսքերով գովեստներ չապելու համար այս և այն անձին, որպէս մեր մէջ սովորութիւն է եղել մինչև այսօր, —այլ պէտք է բովանդա-կեն իրանց մէջ բարձր կրթողական մտքեր։

* *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «Слово» ամսագրի յունկարի տետ-րակում տպվեցաւ մի շատ հետաքրքիր յօդուած հետեւալ վերնագրով՝ «Историческое значение военного подвига»։ Յօդուածի առաջաբանի մէջ գտնում ենք այդ մեղ անհասկանալի վերնագրի բացատրութիւնը։ «Մինչև որ մենք գրում ենք այդ տղերք, ասումէ հեղինակը, մեր զօրքերը պատերազմում են Հայաստանում և Բալկանիայում թիւրքաց պետութեան մէջ բնակվող բրիտա-նեաների ազատութեան համար։ Ռուսաստանում ամենը հետեւանքին, հիացմամբ ընդունում են մեր զօրքերից արած յաղթութեան լուրերը, բայց մի և նոյն ժամանակ սպանվածների և վիրաւորված-ների մասին տեղեկութիւնները ցաւալի արձա-գանք են դառնում մեր սրտերի մէջ։ Այդ ցաւը պատճառւումէ այն մտքով որ շատ ընտանիք-ներին վիճակված է կորցնել իրանց որդուն, եղբորը, հօրը և ամուսնուն։ Ի հարկէ վերջին զիպուածում, այսինքն, երբ որ վախճանվածները թողնում են կնոջ և երեխաներին, բարոյական

կորուստը ամենազգալի է լինում, նա ամենա-զգալի է լինում և ընտանիքի անմխիթար տա-տեալական դրութեան կէտից։ Բայց այդ վերջին զիպուածում հայրերի, ամուսինների, եղբայրների դերը նոցա ընտանիքների վերաբերութեամբ պէտք է յանձն առնէ հասարակութիւնը։ Եւ ճշմարիտ նա յանձն է արել նրանց մասին ամե-նաեռանդօտ կերպով հոգալու։ Մենք կասենք, մինչև անգամ, որ սպանված զինուորների միայն փոքր մասը թողել են իրանցից յետոյ որբերին, իսկ մեծ մասը կամ բոլորովին երեխաներ չեն թողել, կամ թողել են երեխաների անչափ թիւը։ Այդ շատ տխուր երևոյթ է, որովհետեւ զօրքը կազմվում է ամենահասուն և առողջ երիտա-սարդներից և եթէ ընդունենք Ֆիդիկական յատ-կութիւնների ժառանգութեան բնական օրէնքը, կարող ենք հաստատ ասել որ նոքա կը թողնէին Ֆիդիկական զօրեղ և առողջ սերունդ։ Եւ ճշմա-րիտ 100 երիտասարդների վրա 30—35 յայտն-վում են իրանց Ֆիդիկական պակասութիւնների պատճառով անընդունակ զինուորական ծառա-յութեան համար, պարզ է որ նրանց սերունդն էլ մեծ մասամբ անընդունակ կը լինի զինուո-րական ծառայութեան համար։ Ուրեմն երբ որ պատերազմի մէջ ոչնչանում է մի երկրի ազգա-բնակչութեան ընտիր մասը, ոչնչանում է չը թող-նելով իրանից յետոյ սերունդ, այդ կարող է այն հետեանքն ունենալ որ հետեալ զինուորագրու-թեան ժամանակ զինուորական ծառայութեան համար ընդունակ մարդիկներ թիւը կը պակա-սի։ Ահա, հասարակութեան Ֆիդիկական լաւա-գոյն մասի այդ ոչնչանալը անուսնակվում է զինուո-րական ընտիր զօրութիւնը կամ դասաւո-րումն (полдоръ)։ Պարզ է, ուրեմն, որ այդ երե-ւոյթը, այսինքն ցեղի Ֆիդիկական ոյժերի նուա-զելը ներգործութիւն կունենայ ազգի մտաւոր և քաղաքական դրութեան և նրա պատմութեան վրա։» Այդ ներգործութեան հետազոտութիւնը այն խնդիրն էր, որ հեղինակը աչքի առաջ է ունեցել, և նա մեզ յայտնում է որ իր աշխատու-թեամբ նա ոչ թէ միայն նպատակ է ունեցել ցոյց տալ որ վերջին պատերազմում ռուսներից կրած կորուստները կը պատճառեն ներթափան և բարոյական կորուստներ ռուսաց հասարակու-թեան համար, ներգործութիւն կունենան ռուսաց ցեղի Ֆիդիկական ոյժերի նուազելու վրա, բայց իր գրվածքի գլխաւոր նպատակը եղել է ապա-ցուցանել որ քաղաքակրթված ազգերի կեանքի պայմանները ի նկատի ունեւով, պէտք է աշխա-տել փախչել պատերազմներից, որովհետեւ նրանք միշտ եղել են և կը լինեն աղքերի Ֆիդիկական այլաբանման զիպուած պատճառներից մինը։ Յօդուածը հարուստ է պատմական իրողութիւն-ներով, որոնք հաստատում են հեղինակի կար-ծիքները։

Մեզ հաղորդում են որ Մեյն—ՂԱՐԱՔԻ ԻՍԱ գիւղի մօտ գտնվող Շահալու գիւղում սաստիկ տարածված է տիֆ հիւանդութիւնը։ Կարճ մի-

նում օրիորդների մէջ. «Какой приятный человек» ասում էին նրանք Կոստանդից բաժանվելիս։ Այս յատկութիւնն էր պատճառը, որ իր ընկեր-ները նրան յատկացրել էին՝ «рыцарь нашего вре-мени» անունը։ Անցել էին մի քանի ամիս Արամի գիմնադիւն մտնելուց, յետոյ երբ նա նվառեց, որ ուսումնական վարչութիւնը անբաւական էր Կոստանդից։ Այս անբաւականութիւնը նրանից էր, որ սա շատ անգամ թողնում էր իր դա-սերը։ Թէ որտեղ էր լինում Կոստանդը, այդ վարչութեանը դուցէ յայտնի չէր. միայն նա տեսնում էր, որ Կոստանդը գիմնադիւն եկած ժամանակ միշտ գալիս էր անպատասաւ։ Թէն վարչութիւնը նրան այդ իրողութեան մասին մի քանի անգամ էր նրա ընկերներին թէն Արամը նա չարտասակում էր յաճախ յետ ընկնել ուսում-նարանից։ Չմեռ էր, երբ Արամը գիմնադիւնում մի անգամ լսեց, որ ուսումնարանական վարչու-թիւնը դուրս է հանել Կոստանդին և ուրիշ երկու ընկերների անունները անուանական ցուցակից և պատուրեկ է աշակերտներին յայտնել այդ բանը նրան ու նրա ընկերներին թէն Արամը սպասում էր մի այսպիսի ելքի. բայց նրան ծանր թեւեղաւ վարչութեան այս որոշումը. նա մտա-ծեց, որ հասաւ այն ժամանակը, երբ ընկերական բարի խորհուրդը դուցէ նշանակութիւն ու ներ-գործութիւն ունենայ Կոստանդի վրա։ Այս պատ-ճառով Արամը, գիմնադիւնից դուրս գալուց ու աղքատիկ ճան անկուց յետոյ, որոշեց գնալ նրա մօտ։

(Կը չարունակվի)

չոցում այդ գիւղի մէջ մինչև 100 մարդ արդէն մեռել են և այժմ գրեթէ ամբողջ մի ընտանիքի մէջ հիւանդներ կան, որոնք մեռել են առանց որ և է բժշկական հոգստեղծութան:

ՍՏԱՎՐԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են հետեւեալ լուրերը: «Տիֆլիսեան» թերթը հետզհետէ տարածւում է Ռուսաստանում: Նորերումս վախճանեցաւ այդ ցաւից այստեղի աւագ քահանայ Տէր-Պետրոս Պատկանեանի որդին Պօղոս Պատկանեան, որ բժշկի պաշտօն էր վարում Կրեմլնի քաղաքի հիւանդանոցում: Երկուստեքը աւարտած էր իր ուսումը Ս. Պետերբուրգի բժշկական ակադեմիայում: Այստեղ տարածված է այժմ ատամները ցաւը, բայց օրինաւոր ատամնաբույժ բժիշկներ չունենք: Այստեղի ատամնաբույժները մինչև այժմ հանում են ատամները բուրդով: Նախապետական գործիքներով: Նորերումս նորանցից մէկը հանում է մի հայ կնոջ ատամը մի ճշմարիտ ինկվիզիցիական գործիքով և հանում է մի հետ միասին: Կինը հիւանդանոց է, նրա գլուխը սկսում է ուռչել և երեք բժիշկ հաջի կարողանում են աղաթել նրան մահից:

Եթէ յիշատի մեր ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը պարտք է համարել այսպիսի վտանգաւոր ժամանակ վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ գնահատել միջոցներ գործ դնելու, ինչպէս ուղարկել չէ դարձնում այն կողմուտ և դարձնում յետ ընկած փողոցներին որոնցով անկարելի է անցնել առանց քիթը բռնելու: Այդ տեսակ փողոցներից մինը Մեչանակայա ասված փողոցն է: Թիֆլիսում կան տներ, որոնք պատկանում են ճանապարհներին և նոյն իսկ վարչութեան անդամներին, որոնց գաւթիները լինում ամենաարտափոխի գարշահոտ անմաքրութիւններով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՏՏՐԻԱ

Ունգարական միւնիստրները Տիսա և Սզէլ մարտի 6-ին (փետր. 22) գնացել են Պէշտիւր Վիեննա, ներկայ գտնվելու համար միւնիստրների մի մեծ ժողովում որին պետք է նախագահի ինքը կայրը: Այդ ժողովում պետք է որոշվի Բոսնիան գրաւելու հարցը: Վիեննայում, կառավարութեան բարեկամ բոլոր լրագրիները յայտնապէս առաջարկում են գրաւել ժամանակաւորապէս Բոսնիա և Հերցեգովինա: Բոսնիայի բեկերի կողմից պատգամաւորներ են գնացել Վիեննա, ինքրեւ չհամար աւստրիական տէրութիւնից որ Բոսնիան միանայ Աւստրիայի հետ: Նաև, Գիէտի համար երեսփոխանական ընտրութիւնները աշուճելի ժամանակին յետաձգվել կայսեր կողմից յատուկ հրովարտակով ցոյց է տալի թէ աւստրիական կառավարութիւնը ներքին քաղաքականութեան գործերից աւելի արտաքին քաղաքականութեան ծանր գործերով է զբաղել: Վիեննայից գրված մի քանի նամակներ ասում են թէ երբ Աւստրիան գրաւի Բոսնիա և Հերցեգովինա, Ռուսաստանը և Ռուսիայի լուս մնալով հաւանութիւն կը տան, արդէն համաձայնված լինելով: Ինչպէս երևում է, բանակցութիւններ են լինում Ս. Պետերբուրգի և Վիեննայի մէջ: Ուրեմն հաւանական է որ այդ երկու կարգիւնները իրանց մէջ համաձայնվեն դրա մասին: Անգղաշէ կոմսը մինչև այժմ այնպէս է ցոյց տալի թէ Բոսնիայի և Հերցեգովինայի գրաւելը շատ համաձայն չէ Աւստրիայի ճշմարիտ շահերին և ինքն այլ պահանջներ է անում: Նա իրան հակառակ է ցոյց է տալի Բոլշաքիայի իշխանութեան ընդարձակվելուն և ուսմաների երկար ժամանակ այնտեղ մնալուն: Ասում են թէ Աւստրիան մտադիր է առաջարկել կոնգրեսում որ Ռուսիա և Նապոլիոն Թուրքիայի հետ միասին, սլաւոնական ազգեցութեան հակադէմք մի գործութիւն հաստատելու համար այն կողմերը:

Այնու ամենայնիւ, ունգարական թերթերն էլ աւստրիական թերթերի նման սկսում են համաձայնվել Բոսնիան, Հերցեգովինան և մինչև անգամ հիւսիսային Ալբանիան գրաւելու գաղափարի հետ: Պէշտի Lloyd լրագիրը պաշտպանում է այդ գաղափարը որ արդէն յայտնել էին Վիեննայի կիսապաշտօնական լրագիրները: Fremdenblatt լրագիրը ասում է որ եթէ վտանգ է սպառնում մեզ մեր սահմանադրութեանը, անշուշտ մենք աւելի պարտաւոր ենք մեր դոյութեան և կենքի վրա մտածել քան թէ Ռուսիայի ամբողջութիւնը պահպանելու վրա որ արդէն ինքնին գործում է և կը գործի երբ և իցէ, որի համար մենք մեղաւոր չենք:

Անգլիան իր նաւատորմով Գարգանէլը բռնած է. Աւստրիան էլ Ռուսիայի նահանգներին մի քանիսը կը գրաւի և այսպէս իւրաքանչիւր տէրութիւն իր շահերը պաշտպանելու համար գրաւներ ունենալով իր ձեռքում կը ներկայանայ կոնգրեսում: Միայն Ռուսիան կարող է գնահատվել որ ոչինչ չունէ, բայց պատերազմից առաջ Կ. Պօլսում գումարված կոնգրեսից հետո արդէն իմաց էր արած նրան որ եթէ Ռուսաստանի հետ մենամարտութեան դնալով յաղթվել, էլ ոչինչ չը պէտք է յուսայ Ներսիսյան:

Թէպէտ Բիւսարի իշխանը պատճառելով թէ իր առողջութիւնը խանգարված է և թէ չէ կարող շատ ծանր հոգսերով զբաղվել: Հրաժարվում էր կոնգրեսին ներկայ գտնվելուց, բայց վերջին տեղեկութիւնները հաստատում են թէ վերջապէս որոշված է Բիւրլինում գումարել կոնգրեսը որին կը նախագահի ինքը Բիւսարի իշխանը: Ֆրանսիայի կողմից կոնգրեսում ներկայ կը լինի արտաքին գործերի միւնիստր պ. Վադդինգհոմ: Լոնդոնում կարծում են որ եթէ լրջ Դեբրին ինքն չը կամենայ գնալ, Անգլիայի կողմից ներկայ կը գտնվի կամ լրջ Լայթոն, Փարիզում անգլիական զեպանը, և կամ լրջ Սալեբուրի որ Կ. Պօլսի կոնգրեսից հայտնում գտնվեցաւ: Անգլիայի կողմից: Ռուսաստանի և Աւստրիայի կողմից կը ներկայանան իշխան Գօլշտեյն և կոմս Անդրաշին, ինչպէս արդէն յայտնել են Բիւսարի իշխանին: Ինչպէս երևում է, մարտ ամիսը կը զոհվի կոնգրեսի համար կարգադրութիւններին, և կոնգրեսին ներկայանալու հարցերի մասին գտնէ սկզբունքների մէջ կը համաձայնվեն մասնաւոր բանակցութիւններով:

Աւստրիայի կայսեր գահաժառանգի որդին Բօլօք իշխանը, մեծ և փառաւոր ընդունելութիւն գտաւ Բերլինի արքունիքում: Ինքն Վիլհելմ կայսր և կայսերական գերագոտանի բոլոր իշխանները երկաթուղով կայարանը գնալով, դիմաւորեցին երկուստեք իշխանին և նրան մեծ հանդեսով տարան կայսերական պալատը: Ի նկատի ունելով այն ամեն եղբուրթիւնները որ կատարվում են այժմ մեր շուրջը, Վիլհելմ կայսեր կողմից եղած այսպիսի մի շքեղ ընդունելութիւնը Աւստրիայի կայսրորդուն, կարելի է որ առանց նշանակութեան չը լինի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի Սան-Ստեֆանո գիւղը ուր ստորագրվեցաւ խաղաղական դաշնագիրը, շինված է Մարմարա ծովի վրա, հինգ կիլոմետր հեռու Եփեսոս-Կոլոսի դռներից: Կ. Պօլսի գումն է: Այդ գիւղը Սան-Ստեֆանո (Ս. Ստեֆանոս) կոչվում է յունաց եկեղեցու անունով որ նուրբված է Ս. Ստեֆանոսին: Աւանդութեամբ պատմում են որ ուսմանը քրիստոնէութեան դառնալուց քիչ ժամանակ յետոյ, Բիւզանդիոնի վրա արշաւած ժամանակ հասել են մինչև Սան-Ստեֆանո գիւղը և տիրել են նրան: Վառուդապետ Տաւան Գարուիւն է քիչնդիլի տունը ուր Ն. Կ. Բ. Նիկիայի Մեծ դուքսը բնակվում է այժմ, ասում են թէ ճիշդ այնտեղ շինված է ուր գտնվում էր Ս. Ստեֆանոսի վանքը: Արդէն 1203 թուին շինված էր Սան-Ստեֆանոյի եկեղեցին և Գօլօք, Վիեննայի դօժը doge (անուանվում էին Վիեննայի և Չեռնոպոլի հին հանրապետութիւնների գլխավորները), որի գերեզմանը դեռ մինչև այժմ գտնվում է Այա-Սֆիայի մզկիթի թում, այնտեղ մի շոշաւաբանական արօթիկ է ասել տուած, Կ. Պօլսին տիրելու համար յարձակումը սկսելուց առաջ: Այդ եկեղեցին որ ժամանակ անցնելով կործանվել էր, 1844 թվին վերանորոգվեցաւ մի և նոյն տեղ և մեծ մասով հին շէնքի նիւթերն էին որ գործածեցին վերանորոգութեան համար: Այա-Սֆիան յոյների մայր-եկեղեցին էր Ս. Ստեֆան անունով որ Գլուստրինա կայսրը շինել էր տեղի սլաւոնների կերպով: Թիւրքերը Կ. Պօլսի տիրելուց յետոյ, մէկիդ շինեցին նրան:

Կ. Պօլսից գրում են հետեւեալ մի քանի տեղեկութիւնները խաղաղական պայմանների մասին: Բոլշաքիայի ամրոցներում, ինչպէս նաև Դուբայում և Վարնայում, գտնված բոլոր պատերազմական իրերը ներքին պատկանում են Բ. Գրան. 50,000 ռուսաց զօրք երկու տարու չափ կը մնան Բոլշաքիայում և իրանց ծախքը երկրորդ կը հոգայ: Այդ զօրքերը Ռուսաստանի հետ իրանց հաղորդակցութիւնը կունենան Բուդի-նիայի ճանապարհով և Սև ծովի նաւահանգիստներով: Վարնայում և Բուրգասում նրանց համար դէպքեր կը լինեն: Սերբիային և Չէրնոգորիայի պատերազմական սուպանք (կոստրիբուցիա) չի վճարվի: Թիւրքիան կը թողնի Բոսնիայի և Հէրցեգովինայի մինչև 1850 ամսված ամացած տուրքերը: Մինչև 1850 թվականը, Բոսնիան և Հէրցեգովինան իրանց եկամուտները կը գործածեն ասպետաւորութիւնից վճարվածներին օգնելու և կամ իրանց տեղական պիտոյքները հոգալու համար: Հայաստանի համար վարչական վերանորոգութիւններ կը լինեն և հայերը կը պաշտպանվեն քուրդերի և չէրքեսների դէմ: Թիւրքիայի և Պարսկաստանի մէջ եղած սահմանադրութիւնների հարցը կորոշվի կարճ ժամանակում: Բոսնիան և Հէրցեգովինան վարչական վերանորոգութիւններ կունենան: Թէպէտ և Նապոլիոն մի այնպիսի վարչական ձև կունենան, ինչպէս ունեցաւ Կրիտ կղզին 1868 թվին: Կրիտ կղզու և Գլուստրինայի վերաբերեալ խօսք չը կայ դաշնագրի մէջ:

Կ. Պօլսից մարտի 3-ին (փետրվարի 19) «Standart» լրագրին հեռագրում են իշխան Չէրկասկիի մեռելը: Նա մեծ անուն ստացաւ արեւելքում կատարված այս վերջին գործերում: Ռուսաց կայսրը նրան յանձնել էր Բոլշաքիայի վարչական մի նոր կարգաւորութիւն տալու դժուար գործը: Իշխան Չէրկասկիի Լեհաստանի կառավարիչ եղած ժամանակ ցոյց տուած վարչական ընդունակութիւնները իրան արժանացրել էին այս վերջին փառնով պաշտօնին, դեռ ուսուցող զօրքերի օսմանեան երկիրը մտնելուց առաջ: Հէնց որ ուսուսական բանակը անց կացաւ Գլուսայից, նա իր վարչական մարդիկներով միասին գնաց հաստատվեցաւ Տիրնովայում մի և նոյն ժամանակ որ ուսուսական գլխավոր բանակը այնտեղ փոխադրված էր և այնտեղ սկսեց իր պաշտօնի համեմատ աշխատել: Եթէ իշխան Չէրկասկիին չը կարողացաւ տեսնել իր սկսած գործի կատարվելը, գտնէ այդ գործը այնչափ աշխուժած տեսաւ որ էլ տարակոյս չէր մնացել նրա կատարվելուն: Իշխան Չէրկասկիին մեռել է Սան-Ստեֆանոյում:

Վօլօյից հեռագրում են «Times» լրագրին փետրվարի 27-ին, որ բալթիկ զորքերը Կարլիցի հանանգում չորս մասնաւոր խմբիներ կողակցեցին և այրեցին և յետոյ աւարտ չորս սայրերով տարան: Սրանց պատահելով ճանապարհին կանոնաւոր զօրքերը ստիպեցին արանց վերադարձնել կողպատած աւարտ: Թիւրքաց կալվածատէրերը գնահատ են ներկայացնում բալթիկ զորքերի առաջնորդներին վրա:

«Times» լրագրին Սուրինց հեռագրում են փետրվարի 28-ին, որ թիւրքաց կանոնաւոր զօրքին պատկանող վրանոցները սպանեցին ութ անպաշտպան մարդիկ, որոնք տանում էին փող նրանց գլխավորի մօտ, որ այդ միջոցով ապտեն իրանց գիւղերը յարձակումներով: Կանանց բռնաբարեցին, եկեղեցիները սրբապղծեցին: Թիւրքերը դեռ պահում են իրանց գերի վերցրած քրիստոնէայ ընտանիքներին, որոնց մասին իրանց բարեկամները ոչինչ չուր չեն կարողանում ստանալ: Անգլիական զեպանը Լարիսում այս առարկայի վերաբերութեամբ տեղեկութիւններ է պահանջում:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԵՆՆԱ, 9/21 մարտի: Աւստրիական դեղագիտական 29-ին ձայների բաղմութեամբ 20 ձայների դէմ քուէարկեց 60 միլիոն գուլդենի կրեդիտի հարցը:

ԼՕՆԴՈՆ, 9/21 մարտի: Լօրդերի ժողովում Ստրետենա առաջարկեց կոնգրեսից առաջ նախագրութիւններ ընդունել: Լօրդ Վերբի յայտնեց, որ այդ նախագրութիւնները արդէն ընդունված են: Մայտա կղզու վրա յարմար գոյք կայ, որքան կարելի է այնտեղ կարմար կերպով տեղաւորել: Նաւատորմի Սև ծով ուղարկելը այժմ ցանկալի չէ: Անգլիան պահանջում է, որ հաշտութեան պայմանների բոլոր կետերը ներկայացնեն կոնգրեսին, որ նա (կոնգրեսը) կարողանայ բոլոր այդ կետերը քննել: Գերբի կարծում է, որ Անգլիայի պահանջները իրաւացի և չափաւոր են և եթէ այդ պահանջները չեն կատարվել կոնգրեսը անօգուտ կը լինի:

ԼՕՆԴՈՆ, 10/22 մարտի: «Times» լրագիրը քննելով հաշտութեան պայմանագիրը ասում է հետեւեալը: պայմանագրի մէջ կան այնպիսի կետեր, որոնց մասին կարելի է վիճել և քննել: Բայց չը կան այնպիսի բաներ, որոնք քննութեան սահմաններից դուրս լինեն: Կեմբել, որ Բրիտանիայի պատերազմական գործակալն էր Հայաստանում Լայօնի հետ կը մասնակցի կոնգրեսին:

ՀՈՍՏ, 9/21 մարտի: Միւնիստրութիւնը կազմակերպեց Կապրայի նախագահութեամբ: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13/23 մարտի: Նրեկ Վիլհելմ կայսեր ծննդեան օրվայ պատճառով իշխան Գօլշտեյնը այցելեց Գերմանական դեսպան Նիկիային և յանձնեց Կայսրի շնորհած Ալէքսանդր Նիկիայի շքանշանը:

ՎԻԵՆՆԱ, 11/23 մարտի: «Pol. Cor.» լրագրին հաղորդում են Ս. Պետերբուրգից, որ Անգլիայի պահանջից յետոյ քննել հաշտութեան դաշնագրի բոլոր կետերը, գործերի զրոյթիւնը սաստիկ լարված է: Ռուսաց զբաղակային Սան-Ստեֆանոյում հրամայած է չը տեղափոխվել Օդեսա:

Կ. ՊՈԼԻՍ, 11/23 մարտի: Տիֆլ տարածվելու պատճառով սօրթատները մաքրել են մի քանի կազարմաներ: Զօրքերի բանակը գտնվում է Բուրկեղերի դաշտում:

ՎԻԵՆՆԱ, 11/23 մարտի: Թիւրքերը Եպիքոսում 17 տեղեր կողպտել են: «Polit. Correspond.» լրագրին հաղորդում են Բէլլարաից, որ Սերբիայի կառավարութիւնը վճռեց ունենալ ապագայում զիպլոմատիական ներկայացուցչներ Բերլինում, Փարիզում, Ցեպիլինում և երեկ Բոլշաքիայի մայրաքաղաք Սօֆիայում: Բ. Գլուսը նշանակեց Ալէքս. Ֆիտի, Մուսուրուս փաշաներին իր ներկայացուցիչներ կոնգրեսում:

ԼՕՆԴՈՆ, 12/24 մարտի: Ասում են, որ կառավարութիւնը երկու ընկերութիւններից հինգ շաքեւա է վարձել:

ՎԻԵՆՆԱ, 12/24 մարտի: Աւստրո-ունգարական երկու աղբային ժողովները համաձայնվել են բոլոր կետերում: Ունգարական ժողովում Անգրաշէ խօսեց յօգուտ կոնգրեսի, որ ի նկատի ունելով Ռուսաստանի և Անգլիայի մէջ մտերմի կատարեալ փոխանակութիւնը չէ կարելի որոշել կոնգրեսի բացման օրը:

ՀՈՍՏ, 12/24 մարտի: Միւնիստրութիւնը բողոքով կազմակերպեցաւ:

ԲԵՐԼԻՆ, 11/23 մարտի: «Norddeut. Zeitung» լրագիրը, քննելով հաշտութեան պայմանագիրը, ասում է, որ գերմանական շահերը պահպանված են: Գերմանիայի պահանջը ծովային ազատ ճանապարհի մասին բաւականացրած է Գարգանէլեան նեղուցին վերաբերեալ և Գլուսի վրա գտնվող ամրոցների ոչնչացնելու կետերով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 12-ին: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 95 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 25 կ., երրորդ 95 ռ., չորրորդ 94 7/8 ռ.: Ներքին 50% առաջին փոխառութեան տոմսը արժէ 230 ռ., երկրորդ 226 ռուբլ., պուրլիպերիալ արժէ 7 ռ. 78 կօպ., Լոնդոնի վրա ուսուց լուր արժէ 25, 50 պէս, Բերլինի վրա ուսուց 100 լուր արժէ 216 մարկ, Փարիզի վրա 265 Ֆրանկ: Տրամադրութիւնը թոյլ է:

